Տնօրեն ——————— Ա. Նազարյան

Հաստատում եմ

Ստուգված է ——— տնօրենի տեղակալ՝ Հ.Ներսիսյան

Ստուգված է ——— տնօրենի տեղակալ՝ Գ.Գաջիյան

Ուսուցչի օգնական՝ ——————— Ա. Մանուչարյան

«ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան

№2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

Ուսուցչի օգնականի Ի-ին կիսամյակի հաշվետվություն

2023-2024 ուսումնական տարի

Աշխատանքի բովանդակությունը՝

ըստ պաշտոնային նկարագրի

2023-2024թ. ուսումնական ընթացիկ տարվա սկզբին ուսումնասիրել եմ տարրական և միջին դպրոցի կրթության ուսումնական ծրագրերը, պետական չափորոշիչները առարկայական չափորոշիչները:
ՈՒսումնական տարվա 1-ին կիսամյակի սկզբին՝ մինչև սեպտեմբերի1-ը մասնակցել եմ դասվարների, դասղեկների և առարկայական ուսուցիչների տարեկան թեմատիկ պլանավորումների կազմման աշխատանքներին՝ համաձայն պետական չափորոշիչների և առարկայական չափորոշիչների: Հաշվի են առնվել 1-4-րդ, 5-9-րդ դասարանների առարկայական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների ապահովումը: Աջակցել եմ ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանան աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ: Աջակցել եմ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ՝ Iգ դասարանի աշակերտ Կարապետ Ռշտունյանին, IVդ դասարանի աշակերտ Դրամպյան Նարեկին , VIդ դասարանի աշակերտ Էդիտա Օհանյանին և VIIա դասարանի աշակերտ Սարգսյան Նարինեին՝ ԱՈՒՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ: Ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ I,Գ IVդ, VI ,Դ VIIա դասարաններում իրականացրել եմ սովորողների ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ: Օժանդակել եմ բոլոր, ուսուցիչներին այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում:Կատարել եմ դասալսումներ, դրանց վերաբերյալ կատարել եմ վերլուծություններ: Մասնակցել եմ ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին: ՈՒսուցիչների հետ միասին բացահայտել, դիտարկել, հետազոտել եմ տվյալ դասարանում սովորող երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները: Նպաստել եմ սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը: Հարգել և պաշտպանել եմ սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը: Համագործակցել եմ գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Մասնակցել եմ հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի)

աշխատանքներին: Պահպանել եմ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները: Յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմել եմ ԱՈՒՊ՝ դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա: ԱՈՒՊ-ը կազմել եմ ներառական կրթությանն աջակցող մասնագետների կողմից՝ ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ: Տարրական դպրոցի համար աջակցել եմ դասվարներին և առարկայական ուսուցիչներին ԱՈՒՊ-ով սահմանված հետևյալ նպատակների իրագործմանը՝ սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը:

Iգ դասարանում իրականացված դիտարկման ընթացքում ուսումնասիրել եմ **Ռշտունյան Կարապետին** : Դասվար Ա.Սահակյանի հետ միասին կատարած աշխատանքի արդյունքում հասել ենք նրան, որ նա ադապտացվել է դպրոցին:Սեպտեմբերի 15-ից սկսած երեխան դասերին մասնակցել է առանց մայրիկի աջակցության: Կարապետը կարողանում է թվարկել տարվա եղանակները, ամիսները, գույները, միրգ, բանջարեղեն, ընտանի և վայրի կենդանիները: Գիտի իր անուն ազգանունը: Ճանաչում է թվերը, տարբերում է թվերը տառերից: Կատարված աշխատանքի արդյունքում հասել ենք նրան, որ երեխան ճանաչում է տառերը, կարողանում է կազմել պարզ բառեր, կարդալ նախադասություններ: Գրիչը բռնում է իրեն հարմար ձևով, կատարում է անկանոն խզբզոցներ, ցանկության դեպքում կարողանում է գրել տառեր, կամ արտատպել պարզ բառեր: Մտածողության տեմպը դանդաղ է: Տրված առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ է հրահանգը կրկնել և պարզեցնել: Կարապետի խոսքը զարգացած չէ տարիքին համապատասխան: Ցանկությունները արտահայտում է մի քանի միավանկ բառերի և ձայնարկությունների միջոցով: Կարապետը հիմնականում փորձում է ինքնուրույն, առանց մեծահասակին դիմելու լուծել իր խնդիրները, սակայն երբ չի կարողանում ճիշտ բռնել գրիչը,մատիտը, կարող է դիմել մեծահասակի օգնությանը, իրեն հատուկ ձևով՝ ձեռքից բռնած տանում է դեպի ցանկալի առարկան, երբեմն ասում է բառերով: Գրելիս կարողանում է պահպանել տողի սահմանը:

Դրամպյան Նարեկի հետ աշխատանքի արդյունքում դասվար Է.Ղուրուխչյանի հետ միասին հասել ենք նրան, որ երեխան կարողանում է կատարել ծրագրով նախատեսված աշխատանքները մեծահասակի խոսքային ուղղորդմամբ: Նարեկը կարողանում է իրեն հետաքրքրող գործողության վրա ուշադրությունը պահպանել,սակայն արագ հոգնում է , արտաքին ազդակներից արագ շեղվում: Ճանաչում է տառերը, հաճախ շփոթում է միանման տառերը, կարդում է տառ առ տառ, ամբողջացնում պարզ , միավանկ բառերը և կարդում դրանք: Բազմավանկ բառեր կարդալու համար անհրաժեշտ է մեծահասակի

զգալի աջակցություն։Նարեկը կարողանում է արտատպել տառերը, սակայն հաճախ մոռանում է տառի գրաֆիկական պատկերը։ Գրելիս չի կարողանում պահպանել տողի սահմանը և միջբառային հեռավորությունը։ Թելադրություններ գրելիս անհրաժեշտ է մասնագետի խոսքային ուղղորդում։ Ճանաչում է միանիշ թվերը, կարողանում է կատարել առարկայական հաշիվ, սակայն շփոթում է մաթեմատիկական նշանները, մեծահասակի զգալի աջակցությամբ կարողանում է կատարել միայն մաթեմատիկական պարզ գործողություններ։ Երկարատև աշխատանքի արդյունքում հասել ենք նրան, որ երեխան կարողանում է ձևակերպել իր մտքերը,գաղափարները, կարողանում է լուծել պարզ տրամաբանական խնդիրներ, առաջադրանքներ, կատարել թեմատիկ առաջադրանքները մեծահասակի հսկողությամբ։

VI դ դասարանում իրականացրած դիտարկման ընթացքում ուսումնասիրել եմ **Օհանյան Էդիտային**, ում մոտ նկատվել է դժվարություններ ուսումնական գործընթացում գրեթե բոլոր առարկաներից և ունի մշտական օգնության կարիք։ Դասղեկ Մանուկյան Թ.-ին և առարկայական ուսուցիչներին աջակցել եմ գործնական աշխատանք կազմելիս և աշակերտի հետ լրացուցիչ աշխատանքներ տանելու հարցում։ Օհանյան Էդիտայի հետ աշխատանքի արդյունքում հասել ենք նրան, որ երեխան կարողանում է կատարել ծրագրով նախատեսված պարզագույն առաջադրանքները։ Կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը , սակայն շուտ շեղվում է արտաքին ազդակներից։ Կարողանում է հիշել և վերարտադրել առօրյայում իր համար կարևոր տեղեկատվությունը, սակայն ուսումնական նյութը հիշելիս առաջ են գալիս դժվարություններ։ Կատարված աշխատանքի արդյունքում հասել ենք նրան, որ երեխան ճանաչում է տառերը, երբեմն շփոթում է միանման տառերը,կարդում է դանդաղ տեմպով , դժվարությամբ է կապակցում։ Էդիտան կարողանում է գրքից կատարել փոքրիկ տեքստային արտագրություններ, ճանաչում է տետրի տողի սահմանը, սակայն դժվարանում է գրել թելադրություն։ Մաթեմատիկական հմտությունները զարգացած չեն տարիքին համապատասխան։ Երեխան ճանաչում է թվերը 50-ի սահմանում, սակայն կարողանում է կատարել հաշվարկ 10-ի սահմանում։ Չի կարողանում լուծել պարզ մաթեմատիկական վարժություններ և խնդիրներ, իրականացնել կարգային անցումներով գործողություններ։ Կատարված աշխատանքի շնորհիվ երեխան սովորել է 1-ի բազմապատկման աղյուսակը։ Խոսքը զարգացած է տարիքին համապատասխան, այն օգտագործում է որպես հաղորդակցման միջոց։ Չունի հնչյունահնչութային դժվարություններ։

Սովորողը կարողանում է սկսել, շարունակել և ավարտին հասցնել զրույցը, սակայն անհրաժեշտ է մեծահասակի խոսքային ուղղորդում զրույցի ընթացքը պահելու համար։ Հարցերին տալիս է պարզ, ոչ լիարժեք պատասխաններ։ Անծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերություններ հաստատելիս նախաձեռնողականություն չի ցուցաբերում, երբեմն կարող է դրսևորել կամակոր վարքագիծ, սակայն մեծահասակի աջակցությամբ կարողանում է դուրս գալ իրավիճակից և հարմարվել նոր միջավայրին։ Շփման ընթացքում պահպանում է սոցիալական նորմերին համապատասխան վարվեցողության կանոնները։ Խիստ անհրաժեշտության դեպքում դիմում է իրեն ծանոթ և վստահելի մեծահասակին։

Սարգսյան Նարինեի հետ աշխատանքի արդյունքում դասղեկ Ա.Գրիգորյանի հետ

միասին հասել ենք նրան, որ երեխան ուսուցման գործընթացում չունի նկատելի դժվարություններ, կարողանում է ինքնուրույն կատարել տրված առաջադրանքները, թեմատիկ աշխատանքները: Սովորողը կարողանում է ինքնուրույն տեղեկություններ հավաքել տրված թեմայի շուրջ, պատասխանել ով, ինչ հարցերին: Կարողանում է ինքնուրույն կենտրոնացնել ուշադրությունը տրված առաջադրանքի կատարմանը և ավարտին հասցնել այն:Նարինեն հասկանում է իրեն ծանոթ պարզ և բարդ իրադարձությունների հաջորդականությունը , պատկերացնում է պատճառահետևանքային կապերը: Կարողանում է տրամաբանել , դատողություններ անել:Երեխան գրաճանաչ է , կարողանում է վարժ կարդալ տրված նյութը և պատասխանել կարդացած նյութի վերաբերյալ հարցերին: Կարողանում է գրել՝ պահպանելով միջբառային և միջտողային հեռավորությունները, կազմել և գրել նախադասություններ , թելադրություններ: Սովորողը ճանաչում է երկնիշ և եռանիշ թվերը, կատարում է գումարման և հանման գործողություններ և կատարում է կարգային անցումով մաթեմատիկական գործողություններ: Անծանոթ հասակակիցների և մեծահասակների հետ շփման ժամանակ ցուցաբերում է կաշկանդվածություն, շփման ընթացքում շուտ ձանձրանում է: Սովորողը կարողանում է ինքնուրույն սկսել, շարունակել և ավարտին հասցնել զրույցը: Ինքնուրույն մասնակցում է քննարկմանը, արտահայտում իր տեսակետը տվյալ հարցի շուրջ, հիմնավորում այն: Սովորողը կարողանում է դպրոցում ուսուցիչների, մասնագետների և աշակերտների հետ հարաբերություններ հաստատել , սակայն ստեղծված հարաբերությունները պահպանում է միայն դիմացինի նախաձեռնությամբ՝ մասնագետի խոսքային ուղղորդման դեպքում: